ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 4

«Երևանի Պետական Համալսարան» հիմնադրամի կարիքների համար ԵՊՀ Բյուրականի ՌԱԲ-ի 2-րդ մասնաշենքի և ճաշարանի ջեռուցման համակարգի մոնտաժման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԵՊՀ-ԳՀԱՇՁԲ-21/71» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան, Ալեք Մանուկյան 1 22 մարտի 2021 թ., ժամը 17:00

Մասնակցում էին՝
հանձնաժողովի նախագահ՝
1. Ա. Կարապետյան՝ (Գնման Պատասխանատու/Գնահատման հանձնաժողովի ղեկավար՝ ԳՊ/ԳԱՊ),
հանձնաժողովի անդամներ՝
2. Թ. Համբարձումյան՝ (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ՝ ԳՊ/ԳԱ),
3. Ա. Մարգարյան՝ (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ՝ ԳՊ/ԳԱ),
4. Մ. Խաչատրյան՝ (Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ՝ ԳՊ/ԲԱ),
5. Մ. Բաբայան՝ (Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ՝ ԳՊ/ԲԱ),
հանձնաժողովի քարտուղար՝
Ցոլակ Հակոբյան՝ (Գնման պատասխանատու/ընթացակարգի համակարգող՝ ԳՊ/Միմ):

1. Տեղեկատվություն՝ «ԵՊՀ-ԳՀԱՇՁԲ-21/71» ծածկագրով ընթացակարգի բացման նիստի կասեցման վերաբերյալ.
19 մարտի 2021 թ-ի նիստը կասեցվել էր մեկ աշխատանքային օրով, որպեսզի ՆԱԻՐԻ ՇԻՆ ՍՊԸ և "Ֆ Տ Դ-ՇԻՆ" ՍՊԸ մասնակիցներին հնարավորություն տրվի շտկել հայտնաբերված թերությունները, ինչպես նաև "Ֆ Տ Դ-ՇԻՆ" ՍՊԸ, «Դ.Ա.Ն. ՇԻՆ» ՍՊԸ և Լիլիթ Դերձյան ԱՁ մասնակիցները փոխանցեն ներկայացված երաշխիքների բնօրինակները:

2. Տեղեկատվություն՝ մասնակիցների գործողությունների վերաբերյալ.
«Դ.Ա.Ն. ՇԻՆ» ՍՊԸ մասնակիցը սահմանված ժամանակում հանձնաժողովին փոխանցել է երաշխիքի բնօրինակը:
"Ֆ Տ Դ-ՇԻՆ" ՍՊԸ մասնակիցը սահմանված ժամանակում հանձնաժողովին փոխանցել է երաշխիքի բնօրինակը, սակայն չի շտկել հայտի մեջ գրանցված թերությունը:
ՆԱԻՐԻ ՇԻՆ ՍՊԸ մասնակիցը չի շտկել հայտի մեջ գրանցված թերությունները:
Լիլիթ Դերձյան ԱՁ մասնակիցը սահմանված ժամանակում հանձնաժողովին չի փոխանցել երաշխիքի բնօրինակները:
Հիմք ընդունելով վերոնշյալը՝ հանձնաժողովը որոշեց մերժել "Ֆ Տ Դ-ՇԻՆ" ՍՊԸ, ՆԱԻՐԻ ՇԻՆ ՍՊԸ, Լիլիթ Դերձյան ԱՁ մասնակիցների հայտերը:
Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

3. Տեղեկություն՝ մրցույթի արդյունքների ամփոփման մասին.
Մասնակցի (ների) ներկայացրած փաստաթղթերի և գնային առաջարկի (ների) հիման վրա հանձնաժողովը որոշեց որպես **ընտրված մասնակից (առաջին տեղ գրաված) հայտարարել.**
1 չափաբաժնի (ների) մասով՝ Շինարար-97 ՍՊԸ մասնակցին:
2-րդ տեղ զբաղեցնող մասնակից ճանաչել՝
1 չափաբաժնի (ների) մասով՝ «Դ.Ա.Ն. ՇԻՆ» ՍՊԸ մասնակցին:
3-րդ տեղ զբաղեցնող մասնակից ճանաչել՝
1 չափաբաժնի (ների) մասով՝ Իջևանի Բենտոնիտշին մասնակցին:
Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

4. Տեղեկություն՝ մրցույթի արդյունքների հրապարակման մասին.
«Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ անգործության ժամկետ է սահմանվում 5 օրացուցային օր:
Հանձնաժողովը հաստատեց պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը: Հանձնաժողովի քարտուղարին հանձնարարվեց հրապարակել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը և մասնակցին (ներին) ուղարկել պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը:
Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

5. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրվա, ժամի և վայրի հաստատում.
«ԵՊՀ-ԳՀԱՇՁԲ-21/71» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը կհրավիրվի ընթացակարգի պայմանագրերը կնքելուց հետո առաջին աշխատանքային օրը՝ ժամը 11:00-ին:

Հանձնաժողովի Նախագահ՝	Ա. Կարապետյան	ստորագրություն
Անդամներ՝	Թ. Համբարձումյան	ստորագրություն
	Ա. Մարգարյան	ստորագրություն
	Մ. Խաչատրյան	ստորագրություն
	Մ. Բաբայան	ստորագրություն
Քարտուղար՝	Ց. Հակոբյան	ստորագրություն